

## «ԷՆ-Մաքս» (R-Max) ծառայությունների փաթեթի պայմաններ

1. «ԷՆ-Մաքս»-ը ծառայությունների փաթեթ է, որի «ԷՆ-Մաքս 7500» և «ԷՆ-Մաքս 8500» սակագնային փաթեթների կազմում ներառված է երկու ծառայություն՝ «Լայնաշերտ ինտերնետ» և «Մնարթ հեռուստատեսություն», «ԷՆ-Մաքս 10000», «ԷՆ-Մաքս 12500» և «ԷՆ-Մաքս 20000» սակագնային փաթեթների կազմում ներառված է երեք ծառայություն՝ «Լայնաշերտ ինտերնետ», «Մնարթ հեռուստատեսություն» և «Ֆիքսված հեռախոսակապ»<sup>1</sup>:

### «ԷՆ-Մաքս»<sup>2</sup> ծառայությունների փաթեթի գնացուցակ

Ծառայությունների փաթեթ ԷՆ-Մաքս	ԷՆ-Մաքս 7500 <sup>3</sup>	ԷՆ-Մաքս 8500
Ինտերնետի արագություն անժամկետ բաժանորդագրության դեպքում	20 Մբ/վ	30 Մբ/վ
Ներառված հեռուստաալիքների քանակ անժամկետ բաժանորդագրության դեպքում	60	60
Մուլտիբրոմ	հասանելի <sup>4</sup>	հասանելի
Մուլտիբրոմ ծառայության Հավելյալ սմարթ սարք	հասանելի	հասանելի
SmartBox Wi-Fi	հասանելի	հասանելի
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի	հասանելի
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	7 օր	7 օր
Հավելյալ արագություն	անհասանելի <sup>5</sup>	անհասանելի
Առանձին հեռուստաալիքներ	հասանելի	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի	հասանելի
<b>Ամսավճար</b>	<b>7500 դրամ</b>	<b>8500 դրամ</b>

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

Ծառայությունների փաթեթ ԷՆ-Մաքս	ԷՆ-Մաքս 10000	ԷՆ-Մաքս 12500	ԷՆ-Մաքս 20000
Ինտերնետի արագություն	50 Մբ/վ	75 Մբ/վ	125 Մբ/վ
Ներառված հեռուստաալիքների քանակ	առնվազն 88	առնվազն 109	առնվազն 184
Անվճար թույլներ ցանցի ներսում	500	500	700
Անվճար թույլներ դեպի տեղական այլ ֆիսկալ ցանցեր	200	200	300
Մուլտիբրոմ	հասանելի	ներառված <sup>6</sup>	ներառված
Մուլտիբրոմ ծառայության Հավելյալ սմարթ սարք	հասանելի	հասանելի	ներառված մինչև 2 սարքավորում
Հավելյալ ծառայություն «Տուրբո» <sup>7</sup>	հասանելի	ներառված <sup>8</sup>	ներառված

<sup>1</sup> «ԷՆ-Մաքս 10000», «ԷՆ-Մաքս 12500» և «ԷՆ-Մաքս 20000» սակագնային փաթեթներով սահմանված հեռախոսակապի ծառայության պայմանները (տվյալ փաթեթների համար սահմանված ելքային զանգերի սակագները և սույն կետում նշված փաթեթներով չսահմանված պայմանները) համընկնում են «Ֆիքսլայն Կոմֆորտ» սակագնային փաթեթի պայմանների հետ:

<sup>2</sup> «Ռ-Մաքս» ծառայությունների փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:

<sup>3</sup> «Ռ-Մաքս 7500» սակագնային փաթեթի պայմանները չեն գործում Երևան քաղաքում:

<sup>4</sup> Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

<sup>5</sup> Եթե որևէ հավելյալ ծառայություն անհասանելի է, ապա հնարավոր չէ ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում:

<sup>6</sup> Եթե որևէ հավելյալ ծառայություն ներառված է, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում տվյալ հավելյալ ծառայության համար չի գանձվում սահմանված ամսավճարը:

<sup>7</sup> «Տուրբո» ծառայությունը մատուցվում է բաժանորդի ընտրությամբ, այսինքն անկախ այն բանից՝ «Տուրբո» ծառայությունը ներառված է, թե հասանելի տվյալ սակագնային փաթեթի շրջանակում, վերջինս տրամադրվում է բացառապես Բաժանորդի ցանկությամբ: Եթե բաժանորդը չի ցանկանում ակտիվացնել «Տուրբո» ծառայությունը, այն չի ակտիվանում, և համապատասխանաբար «TurboSpeed AX1800» սարքը չի տեղադրվում բաժանորդային հասցեում:

<sup>8</sup> TurboSpeed AX1800 Սարքի (ակտիվացված «Տուրբո» ծառայության օգտագործման իրավունքը ներառվում է սակագնային փաթեթում)՝ առանց տարեկան բաժանորդագրության անհրաժեշտության: Բաժանորդը կարող է հրաժարվել սույն կետում սահմանված պայմանից: Օպերատորի և Բաժանորդի միջև Բաժանորդային պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում TurboSpeed AX1800 Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

SmartBox Wi-Fi	հասանելի	ներառված՝ SmartBox Wi-Fi 1	ներառված՝ SmartBox Wi-Fi 1, SmartBox Wi-Fi 2, SmartBox Wi-Fi 3
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի	ներառված	ներառված
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	7 օր	7 օր	7 օր
Հավելյալ արագություն	անհասանելի	անհասանելի	հասանելի
Սոանձին հեռուստաալիքներ	հասանելի	հասանելի	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի	հասանելի	հասանելի
<b>Ամսավճար</b>	<b>10000 դրամ</b>	<b>12500 դրամ</b>	<b>20000 դրամ</b>

**«ԷՆ-Մաքս»** ծառայությունների փաթեթը բաղկացած է **«ԷՆ-Մաքս 7500»**, **«ԷՆ-Մաքս 8500»**, **«ԷՆ-Մաքս 10000»**, **«ԷՆ-Մաքս 12500»** և **«ԷՆ-Մաքս 20000»** սակագնային փաթեթներից:

1.1. Բաժանորդագրվելով **«ԷՆ-Մաքս»** ծառայությունների փաթեթին 1 (մեկ) տարով Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսուհինգ) օր) շարունակ օգտվել **«ԷՆ-Մաքս»** ծառայությունների փաթեթից:

Մեկ տարով բաժանորդագրության դեպքում Բաժանորդը ստանում է հետյալ առավելություններ՝

1.1.1. Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ քառակի ավելի բարձր արագություն պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 (մեկ) տարի (365 օր) շարունակ (եթե Բաժանորդը օգտվում է «Հավելյալ արագություն» ծառայությունից, ապա քառապատկվում է **«ԷՆ-Մաքս»** ծառայությունների փաթեթի հիմնական պայմաններով սահմանված ինտերնետի արագությունը, իսկ արդեն իսկ ակտիվացված «Հավելյալ արագություն» ծառայության շրջանակներում տրամադրվող արագությունը գումարվում է **«ԷՆ-Մաքս»** ծառայությունների փաթեթի շրջանակներում քառապատկված արագությանը)<sup>9</sup>:

1.1.2. «ԷՆ-Մաքս 7500» սակագնային փաթեթում ներառվում են «Հատուկ 10» և «Հատուկ 30» հեռուստաալիքների փաթեթները, «ԷՆ-Մաքս 8500», «ԷՆ-Մաքս 10000», «ԷՆ-Մաքս 12500», «ԷՆ-Մաքս 20000» սակագնային փաթեթներում ներառվում են «Հատուկ 30» և «Հավելյալ 3» հեռուստաալիքների փաթեթները՝ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 (մեկ) տարի (365 օր) շարունակ,

1.1.3. Բաժանորդը ստանում է 100% (մեկ հարյուր) գեղջ առաջին ամսվա ամսավճարի համար, այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով նախատեսված հիմնական Ծառայություններն առաջին ամսվա ընթացքում տրամադրվում են առանց վճարի գանձման<sup>10</sup>, բացառապես այն դեպքում, եթե վաճառքը կատարվում է Ակտիվ վաճառքի աշխատակցի կողմից, Օնլայն բաժանորդագրության միջոցով կամ գործակալների կողմից: Մնացած բոլոր ուղղություններով վաճառք կատարելիս սույն կետով սահմանված 100% (մեկ հարյուր) գեղջ առաջին ամսվա ամսավճարի համար պայմանը չի տրամադրվում:

1.1.4. Wi-Fi Մաքքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է «ԷՆ-Մաքս» ծառայությունների փաթեթում:

<sup>9</sup> Բաժանորդի ինտերնետի արագությունը չի կարող լինել ավելի, քան 500 (հինգ հարյուր) Մբ/վ:

<sup>10</sup> Սույն կետի իմաստով անվճար ամիս է համարվում ծառայությունների ակտիվացման օրվանից սկսած մինչև հաջորդող ամսվա նույն օրը ընկած ժամանակահատվածը: Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար:

Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի պայմաններով սահմանված բաժանորդագրության պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi -Fi Սարքն անհրաժեշտ է Բաժանորդին Ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման դեպքում տրամադրված Սարք/երը ենթակա է/են վերադարձման Օպերատորին:

- 1.2. «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների 1.1. կետում սահմանված առավելությունների տրամադրման ժամկետը:
- 1.3. Եթե Բաժանորդը սույն պայմաններով սահմանված Ծառայությունների՝ 100% զեղչով տրամադրման ժամանակահատվածում կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է անվճար օգտվել նոր սակագնային փաթեթով տրամադրվող Ծառայություններից մինչև դրանց անվճար տրամադրման համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը՝ եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է: Սույն կետում նշված ժամանակահատվածում «Սմարթ» կամ «Ֆիքսլայն» սակագնային փաթեթներին անցման դեպքում Բաժանորդը դադարում է Ծառայություններից օգտվել անվճար:
- 1.4. Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.1.1. կետում նշված կարգով ստացել է ինտերնետի քառակի արագացում և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է օգտվել ինտերնետի քառակի արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև ինտերնետի քառապատկված արագության գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.1.1. կետով տրամադրված ինտերնետի քառապատկ արագության պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:
- 1.5. Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.1.2. կետում նշված կարգով ստացել է «Հատուկ 10», «Հատուկ 30» և «Հավելյալ 3» հեռուստաալիքների փաթեթները և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել «Հատուկ 10», «Հատուկ 30» և «Հավելյալ 3» հեռուստաալիքների փաթեթներից մինչև դրանց համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև «Հատուկ 10», «Հատուկ 30» և «Հավելյալ 3» հեռուստաալիքների փաթեթների տրամադրման գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.1.2. կետով

տրամադրված «Հատուկ 10», «Հատուկ 30» և «Հավելյալ 3» հեռուստաալիքների փաթեթների տրամադրման պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

- 1.6. Եթե Բաժանորդը անցում է կատարում «ԷՆ-Մաքս» ծառայությունների փաթեթի այն սակագնային փաթեթից, որտեղ ներառված է «Տուրբո» ծառայությունը մեկ այլ սակագնային փաթեթի, որտեղ «Տուրբո» ծառայությունը ներառված չէ, ապա «Տուրբո» ծառայության համար սահմանված ամսավճարը սկսում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում՝ անցումը կատարելու պահից սկսած ավտոմատ կերպով: Այս դեպքում բաժանորդն իրավունք ունի հրաժարվել «Տուրբո» ծառայությունից: Եթե բաժանորդը հրաժարվում է «Տուրբո» ծառայությունից, ապա TurboSpeed AX1800 սարքը ապամոնտաժվում է Բաժանորդի բնակարանից՝ ըստ Օպերատորի կողմից սահմանված ընթացակարգի:
- 1.7. Եթե Բաժանորդը անցում է կատարում «ԷՆ-Մաքս» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթից, որտեղ ներառված չէ «Տուրբո» ծառայությունը, մեկ այլ սակագնային փաթեթի, որտեղ «Տուրբո» ծառայությունը ներառված է, ապա «Տուրբո» ծառայության համար սահմանված ամսավճարը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում՝ անցումը կատարելու պահից սկսած ավտոմատ կերպով:
- 1.8. «ԷՆ-Մաքս 12500», «ԷՆ-Մաքս 20000» գործող սակագնային փաթեթներում ներառված է «Տուրբո» ծառայությունը: Տվյալ սակագնային փաթեթների գործող բաժանորդները ավտոմատ կերպով չեն ստանում հնարավորությունն օգտվելու «Տուրբո» ծառայությունից, վերջիններս կարող են օգտվել «Տուրբո» ծառայությունից ներկայացնելով գրավոր դիմում Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահներում՝ անկախ գործող սակագնային փաթեթի տեսակից (անժամկետ/1 տարի պատահիր բաժանորդագրությամբ):
- 1.9. Բաժանորդն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել «Տուրբո» ծառայությունից: Այդ դեպքում Օպերատորը ապամոնտաժում է TurboSpeed AX1800 սարքը Բաժանորդային հասցեից և ծառայության համար սահմանված ամսավճարը դադարում է գործել Բաժանորդի սակագնային փաթեթի շրջանակում:
- 1.10. Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Բաժանորդային պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում TurboSpeed AX1800 Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:
- 1.11. Գործող Բաժանորդը, պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով միանալով «ԷՆ-Մաքս» ծառայությունների փաթեթին կամ վերակնքելով գործող տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը «ԷՆ-Մաքս» ծառայությունների փաթեթի շրջանակում, ստանում է սույն պայմանների 1.1. կետով տրամադրվող առավելությունները, բացառությամբ 1.1.3. ենթակետով սահմանված առավելության:
- 1.12. «ԷՆ-Մաքս» ծառայությունների սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 (երեք հարյուր վաթսուհինգ) օրվա ընթացքում:
- 1.13. Եթե «ԷՆ-Մաքս» ծառայությունների փաթեթին բաժանորդագրությունը դադարեցվում է Բաժանորդի դիմումի հիման վրա կամ Օպերատորի նախաձեռնությամբ՝ Բաժանորդի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման հիմքով, մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով: Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրից միակողմանի հրաժարման դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի լուծում կատարվում է բացառապես



Բաժանորդի կողմից մինչև Բաժանորդային պայմանագրի լուծման (դադարեցման) օրը իրեն մատուցված Ծառայությունների արժեքի, ներառյալ ամսական բաժանորդային վճարի, ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումների (տույժերը, տուգանքները, հրաժարագին), եթե այդպիսիք առկա են, իրականացման դեպքում:

1.14. Սույն պայմանները գործելու են 01. 01. 2023թ. -ից: